ՄՐՑՈՒՅԹ RN#24-024

Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերման, առաքման, և նախնական գործարկման

Գնառաջարկի հրավեր

Գնառաջարկների ներկայացման սկզբնաժամկետ՝ **20 օգոստոսի 2024թ.**

Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ **04 սեպտեմբերի, 2024թ., ժամը 16:00**

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող "Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու սույն հրավերին կից **Հավելված 1-ում** ընդգրկված ապրանքների համար Ձեր գնառաջարկը: Հավելված 1-ում տրված է պահանջվող ապրանքների մասնագրերը:

Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված:

"Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում կանխավճար չի կատարվում: Ապրանքի համար վճարումը կատարվում է ապրանքի նախնական գործարկումից հետո:

Ապրանքների առաքումը պետք է կատարվի վաճառողի/մատակարարի կողմից: Առանձին ապրանքների առաքման վայրը նշված է Տեխնիկական Առաջադրանքում համապատասխան սարքավորման նկարագրությունից հետո:

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ **ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը,** պետք է **մինչև 2024 թ. Սեպտեմբերի 04-ի , ժամը 16:00** ներկայացվի "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամի գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40:

Հարցերի դեպքում կարող եք գրել samvel.dallakyan@card.am հասցեին:

Հարցերի պատասխանները կտեղադրվեն կազմակերպության վեբ կայքում՝
http://card.am/hy/tenders
համապատասխան մրցույթի ***«հարց ու պատասխան»*** հղման մեջ:

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ Չբացել մինչև հայտերի բացման նիստը բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը

Գնառաջարկը պետք է լինի ստորագրված հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, լինի կնքված հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է լինի նշված հայտատու կազմակերպության անվանումը:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40 հասցեում, ժամը 17:00-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:

2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և մասնակիցները կտեղեկացվեն արդյունքների մասին էլեկտրոնային փոստով: Հաջողակ հայտատուն կտեղեկացվի լրացուցիչ:

3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:

4. <u>Գները:</u> Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագիրը միջպետական պայմանագրի հիման վրա ազատված է ԱԱՀ-ից և ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

5. <u>Գնառաջարկների գնահատում:</u> Առաջարկները, որոնք կհամապատասխանեն տեխնիկական պահանջներին, կգնահատվեն արժեքների և տեխնիկական պահանջների համապատասխանելիության համեմատությամբ: Գնահատելիս Պատվիրատուն առաջնորդվելու է հետևյալ չափորոշիչներով՝

(ա) Առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին

(բ) Առաջարկված գինը

Գնառաջարկները գնահատելիս գնառառաջարկում անհամապատասխանություններ լինելու դեպքում Գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գինը՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

(ա) որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև; տառերով գրված գումարը որոշիչ է,

(բ) որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում; նշված միավոր արժեքը որոշիչ է,

(գ) եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր գնառաջարկը մերժվում է:

6. Վավերականություն: Ձեր գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն քառասունհինգ (45) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

7. **Պատվերի Շնորհում:** Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում գնառաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն գնառաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_____(Ամսաթիվ)

Ում: “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամ

ՀՀ, ք.Երևան, Ազատության 1\21-40

Մենք *(Կազմակերպության անունը)* առաջարկում ենք առաքել RN#24-021 մրցույթի Տեխնիկական առաջադրանքում ներկայացված ապրանքները հետևյալ գնով

№	Անվանում	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Ընդամենը ՀՀ դրամ առանց ԱԱՀ
1	Կոմբայն հացահատիկային	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
2	Ֆոտո տեսակավորող սարք	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
3	Տելեսկոպիկ բեռնիչ	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
4	Վարսակի, հաճարի կեղևազատող սարք	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
5	Հնդկացորենի (գրեչկա) կեղևազատող սարք	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
6	Մրգի, բանջարեղենի չորացման սարք, 700 կգ	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
7	Բեռնիչ տեխնիկա, կառ	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
8	Շարքացան	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
9	Գութան	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
10	Էքսկավատոր	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող առաքումը ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի *(օրերի քանակը)* օր:

Միաժամանակ մենք հասկանում ենք, որ դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը, եթե ներկայացված Գնառաջարկները գերազանցում են տվյալ ծրագրի համար նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է *(օրերի քանակը թվերով և բառերով)* օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Գնառաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ.փոստ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տեխնիկական առաջադրանք

Գյուղատնտեսական սարքավորումներ

1. Կոմբայն հացահատիկային

- Հնձիչի լայնությունը՝ 3.8-4 մ,
- Դիզելային շարժիչի հզորությունը՝ առնվազն 180 ձ.ու.,
- Փոխանցման տուփը՝ հիդրոստատիկ,
- Բեռնաթափման բաձրությունը 4-4.5 մ
- Լուսածերպը՝ նվազագույնը 500-600 մմ,
- Օպերատորի խցիկ՝ զինված օդորակիչով և սառնարանով,
- Բազմաֆունկցիոնալ կառավարման լծակ՝ մոնիտոր և իրազեկման համակարգ,
- Թմբուկի տրամագիծը՝ 600-800 մմ,
- Թմբուկի երկարությունը՝ 1180-1200 մմ,
- Թմբուկի պտտման արագությունը՝ 400-1190 պ/ր,
- Ենթաթմբուկի ընդգրկման անկյունը՝ 150-160 աստիճան,
- Ենթաթմբուկի ընդհանուր մակերեսը՝ 0.9-0.95 մ^2,
- Ծղոտացնցիչների քանակը՝ 4 հատ,
- Ծղոտացնցիչի երկարությունը՝ 3.6-3.8 մ,
- Ծղոտացնցիչի զատման մակերեսը՝ 4-4.5 մ^2,
- Մաղի ընդհանուր մակերեսը՝ 3.55-3.65 մ^2,
- Մաքրման օդափոխիչի պտտման հաճախությունը՝ 350-1200 պտույտ/րոպե,
- Հացահատիկի բունկերի տարողունակությունը՝ առնվազն 4.5 մ^3,
- Ծղոտմանրիչի թմբուկի պտտման հաճախությունը՝ 3000-3500 պ/ր,
- Ծղոտմանրիչների դանակների քանակը՝ 40-50 հատ,
- Ենթաթմբուկի կառավարման համակարգ,
- Երաշխիքը՝ առնվազն 2 տարի կամ 2000 մոտո-ժամ
- Համալրված է օդային կոմպրեսորով

Պետք է առաքվի Շիրակի մարզի Անուշավան համայնք

2. Ֆոտո տեսակավորող սարք

Ֆոտո տեսակավորող սարք՝ 2 հոսքով (двух лотковый) նախատեսված հացահատիկի, հատիկեղենի զտելու և մաքրելու համար, այդ թվում (ցորեն, ձավար, հաճար, ոսպ, սիսեռ, լոբի, ոլոռ, հնդկաձավար, ինչպես նաև դրանց սերմերը, չամանի սերմ): Սարքավորումը տեսակավորում է ըստ գույների՝ համապատասխան համակարգչում ներմուծված ծրագրի՝ ամեն տեսակի համար առանձին, որը պարտավոր է կարգաբերի վաճարող գործարանը:

<u>Սարքավորումը պետք է ունենա 2 հոսքային ուղի,ամեն ուղու վրա երեք հատ տեսախցիկ-սենսոր, որից երկուսը՝գունային , մեկը՝ինֆրակարմիր:</u>

- Արտադրողականությունը՝ (օրինակ ցորենի) 0.5 տոննա/ժամ, ոսպ 0.5 տոննա/ժամ:
- Ելքի ապրանքի մաքրությունը՝ 95%
- Հոսքային ուղու CCD մատրիցա - 5400 պիքսել
- Հոսանքի լարումը՝ 200Վ – 240Վ
- Հոսանքի հաճախականությունը՝ 50 Հերց
- Սարքավորման չափսը ոչ ավել քան երկարություն 1360մմ լայնություն 1420մմ բարձրություն 1900
- Կցման կոմպլեկտ (Комплект сходов для ф/с)
- Բեռնման տարա-բունկեր, 2 ուղիով (Бункер загрузочный разборный 2-х лотковый)
- Փոշին հեռացնելու կոմպլեկտ (Комплект аспирации для фотосепаратора (1-3 секции)
- Սարքավորման մոնտաժ, ծրագրավորում (Настройка оборудования)
- Ապրանքի, սկզբնականից բունկերից ֆոտոսեպերատոր տեղափոխող գիծ
- Հարթակ՝ ֆոտոսեպերատոր տեղադրման համար (Площадка для установки)

<u>Սարքավորումը պետք է ունենա օդի կոմպրեսոր</u>

Զտիչները պետք է ապահովեն օդի մաքրության դաս՝ համաձայն ԳՕՍՏ 17433, ISO 8573-1 (Фильтры должны обеспечивать класс чистоты воздуха по ГОСТ 17433, ISO 8573-1).

Պետք է առաքվի Գեղարքունիքի մարզի Վարսեր համայնք

3. Տելեսկոպիկ Բեռնիչ

Տելեսկոպիկ բեռնիչը օգտագործվելու է գյուղատնտեսական նշանակություն ունեցող ընկերությունում և կատարելու է բազմազան աշխատանքներ՝ հացահատիկի տեղափոխում, բեռնում, խոտի դեզերի տեղափոխում, բեռնում, տարածքների մաքրում և այլն:

	Տեխնիկական նկարագրություն	
1	Նրքին այրման շարժիչը՝ դիզելային	4 մխոցային ներածման համակարգը փչամղումով
2	Հզորությունը	92 ձիաուժ և ավել
3	Շարժիչի հզորությունը	92 ձիաուժ և ավել
4	Շերեփի ծավալը	2,34 մ^3 և ավել
5	Առավելագույն բեռնատարությունը	3100կգ և ավել
6	Բեռնատարությունը առավելագույն բարձրության վրա	2400կգ և ավել
7	Բեռնատարությունը առավելագույն հորիզոնական բացվածքի դեպքում	1250կգ և ավել
8	Բարձրացման առավելագույն բարձրությունը	7,0մ և ավել
9	Առավելագույն հորիզոնական թռիչքը	3,7մ և ավել
10	Դարսման/տեղավորման առավելագույն բարձրությունը	6,3մ և ավել
11	Հիդրավլիկ պոմպի տեսակը	Vario
12	Հիդրավլիկ համակարգի առավելագույն ճնշումը	241 բար և ավել
13	Հիդրավլիկ համակարգի արտադրողականությունը	140 լ/րոպե և ավել
14	Փոխանցման տուփը	Powershift
15	Անվային բանաձևը	4x4
16	Երաշխիքային սպասարկման ժամկետը	12 ամիս և ավել
17	Երաշխիքային մոտոժամի սահմանափակում	Առանց սահմանապակման
	Համալրում	
18	Վարորդի խցիկում՝ օդորակիչ, տաքացուցիչ	
19	Հիդրավլիկ հավելյալ գծեր	
20	Կախովի սարքավորումների արագ միացման Q-Fit կցորդիչ տիպի	
21	Եղաններ՝ 1067մմ երկարությամբ	
22	JCB Live Link կարգի տեղորոշման համակարգ	
23	Bucket Brush (դույլ խոզանակ)	

Պետք է առաքվի Լոռու մարզի Մեծավան համայնք

4. Վարսակի, հաճարի կեղևազատող սարք

- Աշխատանքային ծավալ՝ նվազագույն 1000 կգ /ժ
- Ցանկալի է եռաֆազ
- Ունի որակի կառավարման համակարգ միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկատ ISO 90001

Սարքի համար պետք է տրվի առնվազն մեկ տարի երաշխիք: Սարքը պետք է առաքվի Գեղարքունիք մարզի Ծաղկունք համայնք

5. Հնդկացորենի (գրեչկա) կեղևազատող սարք

- Արտադրողականություն նվազագույնը ժամում 1000-3000կգ
- Ցանկալի է եռաֆազ

Սարքի համար պետք է տրվի առնվազն մեկ տարի երաշխիք: Սարքը պետք է առաքվի Գեղարքունիք մարզի Ծաղկունք համայնք

6. Մրգի բանջարեղենի չորացման սարք, 700 կգ

- Չորացման ծավալը՝ նվազագույն 700 կգ
- Դարակների քանակը առնվազն 56 հատ
- Չժանգոտվող պողպատե դարակները՝ որակը AIS 304
- 220V-1-60 հերց, ցանկալի է միաֆազ
- Խցիկները առանձին կառավարման համակարգով
- Ջերմության կառավարումը՝ Թվային թերմոսթատով
- Շահագործվում է էլեկտրական
- Ունի որակի կառավարման համակարգ միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկատ ISO 90001

Սարքի համար պետք է տրվի առնվազն մեկ տարի երաշխիք: Սարքը պետք է առաքվի Գեղարքունիք մարզի Ծաղկունք համայնք

7. Բեռնիչ տեխնիկա, կառ

- Բեռնատարողականություն 5000 կգ
- Էլեկտրական
- Բարձրացում 3մ

Սարքի համար պետք է տրվի առնվազն մեկ տարի երաշխիք: Սարքը պետք է առաքվի Գեղարքունիք մարզի Ծաղկունք համայնք

8. Շարքացան

Շարքացանի տեսակը	Կցորդվող
Ընդգրկման լայնությունը,մ	առնվազն 3.92
Սկավառակների քանակը,հատ	28
Սկավառակների տեսակը	Կազմված մեկ մասից
Սերմնացան սարքավորումը	Երկու խողովակներով
Միջշարային հեռավորությունը, սմ	14
Սկավառակների ճնշումը հողի վրա,կգ	65
Բունկերի տարողությունը հացահատիկի համար,կգ	առնվազն 450
Բունկերի տարողությունը պարարտանյութերի համար,կգ	Առնվազն 450
Պարարտանյութի բունկերը	Անտեսանելի կափարիչով
Սերմերի և պարարտանյութի բունկերների ձևը	V- ձև
Արտադրողականությունը,հա/ժամ	3.6-4.8
Աշխատանքային արագությունը,հա/ժամ	9-12
Ցանման խորությունը,մմ	20-80
Ցանքի խորության կարգավորումը	Հիդրավլիկ
Հացահատիկի ցանման չափաքանակը,կգ/հա	30-400
Պարարտանյութի ցանման չափաքանակը,կգ/հա	25-200
Անիվների չափերը	11.5x 80-15.3
Տրակտորի հզորությունը,ձու/ժ	80

Շարքացանը կոմպլեկտավորված է:

Տրանսպորտային հարմարանքով	1

Սերմերի և պարարտանյութերի համար բեռնման հարթակով	1
Մարկեր	1
Չուգունի տիպի ցանքի սարքավորումներով	28

Պետք է առաքվի Լոռու մարզի Մեծավան համայնք

9. Գութան

- Խոփերի քանակը 6+1 (14 դյույմ)
- Կրող չորսուն 120x140մմ
- Մոդելը զսպանակավոր
- Քաշը 1800-1900 կգ
- Աշխատանքային լայնությունը 2400-2700-3000-3300 մմ
- Խոփերի միջեւ հեռավորությունը 780 մմ
- Խոփի բարձրությունը 550 մմ
- Աշխատանքային խորությունը 290-310 մմ
- Անվադողը ռետինե
- Երկարությունը 6500-6700 մմ
- Լայնությունը 1900-2100 մմ
- Բարձրությունը 1500-1700մմ

Պետք է առաքվի Լոռու մարզի Մեծավան համայնք

10. Էքսկավատոր

	Տեխնիկական նկարագրություն	
1	Ներքին այրման շարժիչը՝ դիզելային	Caterpillar 3054c-ի համարժեք կառավարմամբ
2	Հզորությունը	Ոչ պակաս 68.5 կՎտ / 93 ձիաուժ
3	Ծնկաձև լիսեռի պտույտների քանակը	-
4	Ոլորող մոմենտը	38%, 1400 շրջ/րոպե
5	Ընթացքային մասը	-
6	Տիպը և փոխանցումների քանակը	12 առաջ 12 հետընթաց

		մեխանիկական
7	Փոխանցման դիապազոնը	6*2
8	Ընթացքի նվազիչի դեպքում	24 առաջ 24 հետընթաց
9	Նվազագույն արագությունը ծնկաձև լիսեռի 1400 պ/ր –ի դեպքում	1.31 կմ/ժամ
10	Նվազագույն արագությունը ընթացքի նվազիչի դեպքում	0.09 կմ/ժամ
11	Հզորության փոխանցման լիսեռ	Էլեկտրահիդրավլիկ ստանդարտ կոմպլեկտացիայով
12	ՀՓԼ պտտման արագությունը կախված ծ.լ.-ի պտույտներից	540 և 1000 պ/ր 2000 պ/ր դեպքում
13	Էկո ռեժիմում	540 էկո 1550 պ/ր
14	Հիդրավլիկ համակարգը	
	ա) առավելագույն ճնշումը	200 բար
	բ) յուղի մատակարարումը հանգույցներին	ամբողջովին ավտոմատ
15	Գետնահեռավորությունը ոչ պակաս	520 մմ
16	Շրջադարձի շառավիղը (առանց արգելակման)	7.2 մ
17	Շրջադարձի շառավիղը (արգելակով)	3 մ
18	Խցիկը	օդորակիչով
19	Անիվների քարշակը	4*4 4 անիվը քաշող
20	Հետևի թևերը	Բարձրացնող
21	Առավելագույն ծանրությունը թևերի վրա	5200 կգ
22	Չափսերը	
	ա) խցիկի բարձրությունը	2822 մմ
	բ) լայնությունը	2352 մմ
	գ) գաբարիտային երկարությունը (առանց կախովի թևերի)	5763 մմ
	դ) անիվների բազայի երկարությունը	2200 մ
	ե) առավելագույն քաշը	11000 կգ

23	Վառելիքի բաքի նվազագույն տարողությունը	160 լ
24	Արգելակման համակարգը	էլեկտրահիդրավլիկ
25	Երաշխիքային սպասարկման ժամկետը	24 ամիս, կամ 3000 մոտոժամ, որն ավելի շուտ կհասնի: Սկսած 13-րդ ամսից երաշխիքը կիրառվում է բացառապես հիդրավլիկ համակարգի և տրանսմիսիայի վրա

Պետք է առաքվի Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկ համայնք